Գենդերային ապատեղեկատվության դեմ պայքարի ուղեցույց

Ի՞նչ է գենդերային ապատեղեկատվությունը

Գենդերային ապատեղեկատվությունը ենթադրում է անձի գենդերի, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման հետ կապված կեղծ և ապակողմնորոշող տեղեկության կանխամտածված տարածում՝ հիմքում ունենալով քաղաքական, մշակութային կամ գաղափարական նպատակներ: Այս արշավները շահարկում են հասարակությունում առանց այն էլ առկա բաժանարար գծերը, վնասում բռնության ու խտրականության հանդեպ խոցելի անձանց և խարխլում ժողովրդավարության հիմքերը:

Ինչո՞ւ է մտահոգիչ գենդերային ապատեղեկատվությունը

ԱՅՆ ԼՌԵՑՆՈՒՄ Է ՄԱՐԳԻՆԱԼ ՁԱՅՆԵՐԸ

Գենդերային ապատեղեկատվությունը, թիրախավորելով կանանց, ԼԳԲՏՔ+ անձանց և ակտիվիստներին, ճնշում է նրանց քաղաքացիական մասնակցությունը և լռեցնում քննադատական ձայները:

ԱՅՆ ՄԱՆԻՊՈՒԼԱՑՆՈՒՄ Է ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ

Այն մանիպուլացնում է կարծրատիպերը և մշակութային արժեքները՝ նախապաշարումները խորացնելու, տարաձայնություններ սերմանելու և ճնշող ուժային հարաբերակցությունը պահպանելու նպատակով:

ԱՅՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ Է ՀԱԼԱԾԱՆՔՆ ՈՒ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Ապատեղեկատվական արշավները հաճախ վերածվում են իրական վտանգի՝ ներառելով հալածանք, հոգեբանական տրավմա և ֆիզիկական բռնություն:

ԱՅՆ ԽԱՐԽԼՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Քայքայելով վստահությունը կառավարման, մեդիայի և այլ ինստիտուտների նկատմամբ՝ գենդերային ապատեղեկատվությունը խարխլում է ժողովրդավարության հիմքերը:

ԱՅՆ ՊԱՌԱԿՏՈՒՄ Է ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այն խթանում է համայնքային պառակտումները՝ դժվարացնելով փոխըմբռնման և վստահության ձևավորումը:

Ինչպե՞ս հակազդել գենդերային ապատեղեկատվությանը

ՃԱՆԱՉԵ՛Ք ՁԵՐ ԼՍԱՐԱՆԸ

Ու՞մ եք փորձում հասցնել ձեր ասելիքը: Փորձում եք կրթել ձեր համախոհների՞ն, թե՞ համոզել այն մարդկանց, որոնք հավատում են գենդերային ապատեղեկատվության պատմույթներին (նարատիվներին): Մարդու ինքնության և արժեքների ո՞ր տարրերի մասին կարող եք խոսել, որ նրանց ավելի արդյունավետ համոզեք:

ՀԵՏԱԶՈՏԵ՛Ք և ԲԱՑԱՀԱՅՏԵ՛Ք

Հետազոտե՛ք գենդերային ապատեղեկատվության օրինաչափությունները, հետևե՛ք պատմույթների աղբյուրներին և բացահայտե՛ք ապատեղեկատվության տարածման հետևում կանգնած դերակատարներին կամ հարթակները:

ՀԱՄԱՏԵ՛ՔՍՏ ՏՐԱՄԱԴՐԵՔ

Փորձե՛ք ցույց տալ գենդերային ապատեղեկատվության արշավների և դրանց սոցիալական ազդեցության կապը՝ շեշտադրելով ժողովրդավարությանն ու մարգինալ խմբերին հասցվող վնասը:

ՀԱԿԱԶԴԵ՛Ք ՎՆԱՍՈՂ ՊԱՏՄՈՒՅԹՆԵՐԻՆ

Հրապարակե՛ք դրական և փաստերով հիմնավորված պատմություններ, որոնք մարտահրավեր են նետում կարծրատիպերին և տոնում դիմադրողականությունը:

ԿՐԹԵ՛Ք և ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵ՛Ք

Բարձրացրե՛ք իրազեկվածության մակարդակը գենդերային ապատեղեկատվության մարտավարությունների վերաբերյալ և աշխատե՛ք փաստեր ստուգողների և փորձագետների հետ՝ ձեր լրագրողական աշխատանքն ավելի որակյալ դարձնելու համար:

ՕՐԻՆԱԿՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆ Դեկտեմբերի 2-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն նախագահ Սալոմե Զուրաբիշվիլիին «հիստերիկ» անվանեց՝ արժեզրկելով նրա դերը Վրաստանի՝ ԵՄ անդամակցության գործընթացի դադարեցման դեմ բողոքի ցույցերում: Նա նախագահին պիտակավորեց «էմոցիոնալ» և մեղադրեց նրան «մայդան» կազմակերպելու մեջ՝ կառավարությունը տապալելու նպատակով: Այս հռետորաբանությունն արտացոլում է ավելի լայն օրակարգ՝ թուլացնել ընդդիմությանը՝ նրանց ներկայացնելով որպես Վրաստանը Ռուսաստանի հետ պատերազմի հրահրող ուժ, ինչպես նաև, օգտագործելով գենդերային ապատեղեկատվությունը, նախագահ Զուրաբիշվիլիին և այլ կանանց ներկայացնել որպես իռացիոնալ և ոչ պիտանի ղեկավարման համար:

ՀԱՅԱՍՏԱՆ Հայաստանի կին պատգամավորները գենդերային ապատեղեկատվության թիրախ դարձան, երբ առաջարկեցին ընտանեկան բռնությունից պաշտպանության մեխանիզմները տարածել նաև չամուսնացած զույգերի վրա: «Հրապարակ» առցանց լրատվամիջոցը, որը ֆինանսավորվում է պրոռուսական նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից, խեղաթյուրեց բարեփոխումները՝ պնդելով, որ դրանք նպատակ ունեն պաշտպանել նույնասեռական հարաբերությունները «արևմտյան արժեքների» քողի ներքո: Այս խեղաթյուրումը համահունչ է այն ջանքերին, որոնք նպատակ ունեն վարկաբեկել կանանց նախաձեռնած բարեփոխումները՝ ներկայացնելով դրանք որպես օտարազգի պարտադրանքներ՝ տեղական սոցիալական խնդիրները հասցեագրելու փոխարեն:

ԼԵՀԱՍՏԱՆ 2020թ· վերընտրական արշավի ընթացքում Լեհաստանի նախագահ Անջեյ Դուդան ԼԳԲՏՔ+ իրավունքները հավասարեցրեց կործանարար գաղափարախոսության՝ դրանք անվանելով «ավելի վտանգավոր, քան կոմունիզմը»: Այս պատմույթը նպատակ ուներ միավորել պահպանողական ընտրազանգվածին՝ ԼԳԲՏՔ+ պաշտպանությունը ներկայացնելով որպես մշակութային սպառնալիք և ճնշելով առաջադեմ կարծիքներն ու խթանելով բաժանարար օրակարգը:

Գենդերային ապատեղեկատվության վերաբերյալ էթիկական ստուգաթերթ լրագրողների համար

Հարց	Այո	Ոչ
Ստուգե՞լ եմ արդյոք բոլոր պնդումները, վիճակագրական տվյալները և աղբյուրները՝ համոզվելու, որ դրանք ճշգրիտ են և խեղաթյուրված չեն ապատեղեկատվական արշավի շրջանակում:		
Իմ լուսաբանման ընթացքում օգտագործե՞լ եմ ներառական, հստակ և չխարազանող լեզու, որը չի վերարտադրում գենդերային ինքնության հետ կապված կարծրատիպերը:		
Իմ հոդվածը ներառո՞ւմ է բազմակարծություն, մասնավորապես՝ տուժած համայնքների տեսակետները, առանց նրանց խտրականության կամ երկրորդային զոհացման ենթարկելու:		
Արդյոք նվազագույնի՞ եմ հասցրել իմ հոդվածում ներկայացված անձանց մնասելու հավանականությունը և անանունություն երաշխավորել խոցելի աղբյուրների համար՝ ըստ անհրաժեշտության:		
Արդյոք խորհրդակցե՞լ եմ տեղական փորձագետների կամ տուժած համայնքների հետ՝ մշակութային ճշգրտությունն ապահովելու և արտաքին կողմնակալությունից խուսափելու համար: Գնահատե՛ք ձեր կողմնակալության մակարդակը՝ օգտագործելով Հարվարդի համալսարանի Implicit Association Test		
Իմ հոդվածի նկարները, վերնագրերն ու ենթավերնագրերը ճշգրի՞տ են արդյոք ներկայացնում թեման՝ առանց կարծրատիպերը վերարտադրելու կամ խնդիրը սենսացիա դարձնելու:		
Խուսափե՞լ եմ դիպֆեյքերից, մոլորեցնող վիզուալ բովանդակությունից կամ արհեստական բանականության միջոցով գեներացված աղավաղումներից, որոնք սովորաբար օգտագործվում են գենդերային ապատեղեկատվության դեպքում:		

Լուսաբանելով գենդերային ապատեղեկատվությունը

«Հալածանքների ցանց. Ինչպես են ծայրահեղ աջերն անհամաչափ թիրախավորում կին քաղաքական գործիչներին»

Այս հետաքննությունը բացահայտում է, թե ինչպես են ծայրահեղ աջ խմբերը առցանց հարձակումներ կազմակերպում Եվրոպայի կին քաղաքական գործիչների նկատմամբ՝ նպատակ ունենալով լռեցնել և վախեցնել նրանց: Այն ներկայացնում է հստակ դեպքեր և քննարկում դրանց ավելի լայն հետևանքները ժողովրդավարության համար:

Այդ հոդվածը համապատասխանում է գենդերային ապատեղեկատվության լուսաբանման ուղեցույցին·

- Այն վկայակոչում է կոնկրետ դեպքեր և ներկայացնում տվյալներ, ինչպիսիք են օրինակ՝ գերմանական AfD աջակողմյան կուսակցության կողմից Ֆեյսբուքում քաղաքական գործիչ Կատարինա Շուլցի վերաբերյալ արված անհամաչափ թվով հիշատակումները, ինչը վկայում է ծավալուն հետազոտության և փաստերի ստուգման մասին:
- Հոդվածը ներկայացնում է Եվրոպայում կին քաղաքական գործիչների դեմ ուղղված գենդերային հալածանքները՝ ընդգծելով նրանց դիմադրողականությունը և խրախուսելով աջակցությունը, ինչպես նաև մշակութային համատեքստ տրամադրելով քաղաքական տարբեր միջավայրերում առցանց հալածանքների վերաբերյալ:
- Թեև հիմնական շեշտադրումը խնդրի բացահայտումն է, հոդվածը նաև կին քաղաքական գործիչների դիմադրողականության օրինակներ է բերում՝ անուղղակիորեն խրախուսելով տուժածներին աջակցելու կարևորությունը:
- Հոդվածում նշվում է, որ նման վիրավորանքներն ու հալածանքները հաճախ թիրախավորում են քաղաքական գործիչների ինքնության մի քանի ասպեկտներ, այդ թվում՝ գենդերը, ռասան և արտաքին տեսքը, ինչը վկայում է փոխհատականության (ինտերսեկցիոնալության) ըմբռնման մասին:
- Հոդվածը օրինակներ է ներկայացնում տարբեր երկրներից և քաղաքական միջավայրերից՝ բազմակողմ հեռանկար առաջարկելով խնդրի վերաբերյալ:
- Ռազմավարական երկխոսության ինստիտուտի (ISD) հետ համագործակցությունը հարստացնում է փորձագիտական վերլուծությունը՝ բարձրացնելով հոդվածի արժանահավատությունն ու խորությունը:
- Հոդվածի հետաքննական բնույթը վկայում է, որ այն նպատակ ունի անաչառ ներկայացնել իր բացահայտումները՝ խուսափելով կողմնակալությունից:
- Հոդվածը լուսաբանում է առցանց բռնության դեպքերը՝ առանց տուժածներին կրկնակի զոհացման ենթարկելու, ապահովելով նրանց գաղտնիությունը և կենտրոնանալով համակարգային խնդիրների վրա:

INSTITUTE FOR WAR & PEACE REPORTING